# ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԱՍ ՈՒ ԴՊՐՈՑ

**Անահիտ Աթայան**
**բ.գ.թ., պրոֆեսոր, ՄՄՀ, ԱրՊՀ**
**Արցախ**

***Անոտացիա:*** *«Մանկական գրականության բանահյուսական ժանրերը Լ. Հարությունյանի «Նշխարներ»-ում» հոդվածում բնութագրվում են բանահյուսական ժանրից օրորոցային երգը, հանելուկը, խաղերգերը, շուտասելուկները, սուրասելուկները, զվարճախոսությունները, որոնց նպատակն է հայ աշխարհիկ ավանդույթներով դաստիարակել երեխային, ով պետք է 2 ոտքով ամուր կանգնի հայրենական զորավոր հողի վրա: Վաստակաշատ մանկավարժի հոդվածները, գրառումները խոսում են բանահյուսական նյութերի կրթադաստիարակչական նշանակության մասին: Լ. Հարությունյանի «Նշխարներ»-ի 5 հատորներում զետեղված բանահյուսական ժանրերը հրաշալի նյութ են բոլոր ժամանակների մանկական գրականության, մանկական ընթերցանության համար:*

***Բանալի բառեր***. *մանկական գրականություն, օրորոցային, շուտասելուկ, հանելուկ, հաշվերգեր, նշանավոր բանահավաք, վաստակաշատ մանկավարժ:*

Հայ մանկական գրականության ակունքները սկսվում են վաղ ժամանակներից: Դարերի խորքից են հառնում ժողովրդի կենդանի խոսքը, նրա բանահյուսությունը:

Միշտ էլ հայ մանկանը ուղեկցել են ժողովրդական երգերը, հեքիաթները, մանրապատում ստեղծագործությունները: Արցախի ժողովրդական բանահյուսության նմուշները դարձել են հայկական դպրոցների դասագրքերի զարդը, երեխայի մշտական ուղեկիցն ու դաստիարակողը, որովհետև այն փոքրիկի էության մեջ է թափանցում ամենավաղ մանկությունից: Մանկական գրականության գերազնիվ նպատակը մանկան դաստիարակությունն է, իսկ այն իրականացվել է առաջին հերթին ժողովրդական բանահյուսության միջոցով: Բանահյուսությունը նախ մանկան շրջապատն է մտել բանավոր, իսկ հետո՝ գրավոր, կամ մանկական պարբերականների միջոցով ու նշանավոր հեղինակների մշակումներով:

Նշանավոր բանագետ Լ. Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» 5 ժողովածուները պարունակում են բազմաթիվ նյութեր,որոնք վկայում են,որ երեխայի մեջ դարեր շարունակ իրենց դաստիարակչական բնույթով լայն տարածում են գտել շուտասելուկները, զվարճախոսությունները, սուտասելուկները, սուրասելուկները, հաշվերգերը, հանելուկները, որոնք իրենց հակիրճությամբ հեշտընկալ են, պատկերավոր ու իմաստալից: Սրանք ցայտուն են դարձնում որևէ բնորոշ միտք, վարժանք և զվարճալիք են, ժողովրդի կենսափորձն են հաղորդում փոքրիկին, ընդլայնում են նրա մտահորիզոնը:

Ժողովրդական բանահյուսության հնագույն ժանրերից է օրորոցայինը: Նպատակն է հայաշխարհիկ ավանդույթներով դաստիարակել հայ երեխային, մոր կաթը դարձնել հայրենական բալասան: Արցախյան բանահյուսության մեջ դեռևս մատնաչափ ու մտատկար մանուկը այսպիսի երգեր էր լսում իր մորից, երբ անզոր պառկած էր օրորոցում.

Լայ անիմ, վեր քնանաս,
Լայ անիմ շուտ մեծանաս,
Քու հոր աջըղը օնիս,
Դուշմանին աշկը հանիս
Լայ-լայ, իմ չախմուր բալա:
Լայ-լայ, իմ կամբուր լալա: [1, էջ 20]

Նշանավոր բանահավաքը գրում է. «Այսօր և ընդմիշտ Արցախի հայ պատանին, երկու ոտքով ամուր կանգնելով հայրենական զորավոր հողի վրա, որպես հավերժական պատվիրան պետք է կրկնի, այն աներեր համոզմունքով, որ՝

Աշխարհ եկա, հայերեն խոսելու համար,
Հայու երգ լսելու համար,
Հայու երգ ասելու համար,

Հայերեն պարելու համար,
Արցախի մեր հողի վրա
Քիրսի պես տնկվելու
Եվ հավերժ ապրելու համար: [1, էջ 21]

Վաստակաշատ մանկավարժը իր հոդվածներում, գրառումներում խոսում է ժողովրդական բանահյուսության նյութերի կրթադաստիարակչական նշանակության մասին: Մայրական գովքը զուգակցվում է օրհնանքին ու ջերմությանը: Գեղեցիկ մակդիրները խոսում են օրորոցային երգերի բարեհնչունության, անկեղծության մասին: Մայրը երկար կյանք է ցանկանում իր տղային կամ աղջկան, ուզում է որ որդին «ուշունցատու» չլինի, որ երկար ապրի, մաքուր լինի, թշերը կարմիր, շուտ մեծացող: Մոր որդին ոսկե լալա է, ծաղկած կապար, նախշած աշուն: «Բալան հրեյի հասնողա», ասել է թե՝ օգնող, սատար լինող է:

Անսահման է օրոր ասող մոր սիրտը, նրա գորովը: «Մոր կշեռքը» երկում նոր բալիկ ծնած ջահել մայրը տան եղած ամբողջ բարիքը հանում-փռում է իր շուրջը և վերցնում-ձգում կշեռքը.

-Էս մի խնձորը աստծո նժարին,
Էս երկու զույգն էլ բալիս նժարին:
Էս մի զույգ նուռը աստծո նժարին,
Էս երկու զույգն էլ բալիս նժարին... [2, էջ 7]

Մայրը ամեն ինչից բաժին է հանում և իր որդուն, և աստծուն, բայց առավել շատ որդուն է տալիս իր բաժինը: Սակայն էլի չի հովանում սիրտը.

«Ողորմած աստված,-ասում է նա,- թե որ կշռելիս արդար չեմ եղել: Դու էլ քո հերթին
Մոր խղճի բուռով
Տարիք հավելիր բալիկիս փային: [2, էջ 8]

Օրորոցային երգերը մի տեսակ խաղացկուն են, այնտեղ մենք տեսնում ենք զավակների արտաքին ու ներքին բարեմասնությունները: Մայրը դարդը մի կողմ նետած, պար է ածում երեխային՝ փորձելով փոքր ինչ ազատվել հոգսերից:

Պապար, պապար, պար անինք,
Բալքի դարդիս ճար անինք,
Պար կյանք, քշերը լուս անինք,
Դարդերը տանան տուս անինք... [3, էջ 169]

Հետաքրքիր են մոր ցանկությունները.

Ճակատդ պաչիմ, խելունք ինիս,
Աչքերդ պաչիմ՝ բաբայ անիս,
Քեթդ պաչիմ՝ պլկանուտ չընիս,
Թոշերդ պաչիմ՝ կամբուր ընիս,
Պերանդ պաչիմ՝ ըշունցատու չընիս,
Մազերդ պաչիմ՝կեռ-կըռանաս,
Չանադ պաչիմ՝ մրքավուր տեռնաս: [3, էջ 169]

Մայրերն ու տատիկները ցանկանում են, որ երեխաները անդարդ մեծանան, քաղցր լեզու ունենան, «մեր աղոթքը աստծուն տան», «մեր դարդերը՝ քամուն»:

Իսկ ամենակարևորը՝ Այան մատաղ քու ջանետ,
Ճապկեճպատ բդանետ,
Դուշմանին աչկը վխծրցընիս,
Տանը լուսը ճուխտրցնիս: [3, էջ 168]

Ղարաբաղցին միշտ էլ հավատարիմ է մնացել նախնիների ավանդույթներին, առաջնորդվել է այս աշխարհաշեն սկզբունքով.

Ժառանգ թողե,
Կամար կապե,
Մին կյիր կյրի,
Մին ծառ տնկե,
Հավատդ էլ ղայիմ փռնե: [3, էջ 5]

Վաստակաշատ մանկավարժը, քաջածանոթ լինելով մանկան մտածողությանն ու զգացողության ոլորտներին, ի մի է հավաքել բանահյուսական այս ժանրերը, որոնք երեխայի կյանքում կարևոր դեր են խաղում, որոնց ուսուցողական ու ճանաչողական դերն ակնհայտ է:

Մանկավարժական միտքը վկայում է, որ բոլոր ժամանակներում էլ խաղը կարևոր դեր է խաղացել երեխայի կյանքում: Խաղ-բանաստեղծությունների շատ ենք հանդիպում մեր դասական մանկագիրների երկերում (Աղայան, Թումանյան, Պատկանյան): Բանահյուսական խաղային ժանրերը բացահայտել են երեխաների կենդանի խառնվածքը, խաղի միջոցով ժողովուրդը ներգործել է երեխայի վրա: Բանահյուսական խաղերը դաստիարակում են առաքինի, խելացի, հնարամիտ սերունդ, որը ճիշտ է կողմնորոշվում կյանքում, սովորում է գործելու, համագործակցելու ունակություն: Հմայիչ խաղերն ու զրույցները երեխաներին հաղորդակից են դարձնում հայրենի երկրի ու ժողովրդի խնդիրներին, ընդարձակում են նրա կենսաճանաչողությունը: Ժողովրդական խաղերը իմաստուն ու կենսուրախ են: Դեռևս Խ. Աբովյանը, Հ. Թումանյանը գտնում էին, որ խաղը փոքրիկի բնական, օրգանական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է, և որ «կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, խաղով է քննում, խաղով է ճանաչում ու ընդունում, դա նրա ձևն է, նրա մեթոդը»: Թումանյանն ասում է. «Եվ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ է յուրացնում, առանց ձանձրանալու, առանց հոգնելու»: Թումանյանը ամենակրտսեր տարիքի երեխաների համար ձեռնարկում է հայրենագիտական խաղեր կազմելու գործը, որպեսզի նրա միջոցով «մեր երեխաներն ու պատանիները ճանաչեն ու սիրեն հայրենիքը»:

Ժողովրդական բանահյուսության խաղերը ներդաշնակում են երեխաների հետաքրքրությունների աշխարհին: Լ. Հարությունյանի գրի առած խաղերի ու խաղերգերի զվարթությունը խոսքի կախարդող ուժը, աշխույժ ու կենսալից պատումը հնարավորություն են տալիս, որ դրանք նպաստեն երեխաների ճաշակի ձևավորմանը, գեղեցիկի ընկալմանը:

«Նշխարներ Արցախի բանահյուսության» գրքի առաջին հատորում Լ. Հարությունյանը զետեղել է ժողովրդական խաղերի ցանկ, որոնցից շատերը բացատրված են՝ խաղի կանոնների վերհանումով: Օր. գյուղլկանե, բաբադուշի, դնգլե, ըշկըճպովան, ըրկընցուփե, թոփե, թուխկակոխ, լուքտանե, կլըկոնձի, կմբլեչի, կոխ, հաբի, մընընքարե և այլն:

Շատ անուններ հուշում են խաղի բնույթն ու իմաստը: Դրանք հմտություն, ճարպկություն, հնարամտություն են սովորեցնում: Այսպես. նկարագրելով «Միրկկոռ» խաղը, Լ. Հարությունյանը նշում է խաղի մշտական բնույթը, եթե մահակը ձեռքից ընկնում է, փշրվում, դա վկայում է պարտության մասին: Պարտված հակառակորդը իրավունք չունի տեր կանգնելու մահակին: Սա ռազմական դաստիարակության նպատակ ունի: Նույնպիսի նպատակադրումով է ձևավորված «Թուխկակոխ» խաղը: Հետաքրքիր խաղերը լցնում էին երեխայի օրը, նրանց հաճույք պատճառում, սովորեցնում ընկերասիրության, պարտքի ու պատասխանատվության զգացում, զսպվածություն, ճկունություն, կամք:

Իր ժողովածուներում Լ. Հարությունյանը զետեղել է մտային բազմաթիվ հետաքրքրաշարժ վարժանքներ:

Այսպես. -Մին խոսք ասե

-Խնձոր:

-Խնձորը խնձորեն օտե, տու էլ իմ խնձորս օտիս, վեր խնձորս կյա ծեր տոնը, հինչ կտա՞ս:

-Նոռնը:

-Նոռնը նուռնեն օտե.... [3, էջ 321]

Խաղացողն այնպիսի պատասխան պիտի ընտրի, որ հարցնողը պարտվի: Օր.- Բադարաքը բադարաքին օտե, տու էլ իմ բադարաքս օտիս...

Հակառակորդը պարտվում է:

Կամ - «Կարո՞ղ ես նախադասություններ կազմել, որի բոլոր բառերը սկսվեն միևնույն հնչյունով. օր. Տիբոշեն տատը տավարը տարավ տվավ տվըրաձեն:

Հետաքրքիր է խաղի մի տեսակ, որի ժամանակ երեխան պետք է ընկալի երևույթը: Խաղավարը հայտնում է խաղի կանոնները. երեխաները պետք է ցուցամատերը բարձրացնեն այն ժամանակ, երբ խոսքը վերաբերի թռչունին, իսկ կենդանու ժամանակ, չպիտի բարձրացնի, հակառակ դեպքում՝ պարտությունն ակնհայտ է: Սխալվողը դուրս է մնում խաղից: Սա ևս մտավոր վարժանքի տեսակ է:

Այսպես ժողովուրդը հորինել է տարբեր խաղեր, որոնք թե ոգևորում, թե ճանաչողական դեր են խաղում: Իսկ «Պատասխանիր արագ» բաժնում տրամաբանական առաջադրանքներ է ժողովուրդը հորինել՝ փորձելու համար երեխային.

Օր. –Ծուկունկեսը կպրկկեսա, օխտը ծուկունը քանի՞ կապեկ կընի:

Կամ –Ծառեն 3 քաշ կա, մինը վեր թվանգավ վեր քցիմ, տակեն քանե՞սը կմնա:

Կամ -Էս մարթին կնգանը ախպեր իմ դայիյա, էս մարդը իմ հի՞նչըսա:

Կամ –Էրկու հար, էրկու վերթի կյամըն ղոնաղ, տնատեռնը հյաթումը 3 ծառ ա ընում, ծիենը հունց կապին, վեր ամեն ծառու մին ծի ընեն (ես, իմ տղան, իմ տղես տղան): [3, էջ 323]

Լ. Հարությունյանի վկայությամբ Արցախում տարածված էին հանգախաղերը, որի մասնակիցները իրար բառեր, բառակապակցություններ ու նախադասություններ էին առաջարկում և հակառակորդները պատասխանում էին՝ ստեղծելով հանգախաղ:

Պատասխանները հաճախ դուրս էին գալիս բառախաղերի սահմաններից և ներկայանում որպես ամբողջական կարճ բանաստեղծություններ՝ որոշակի տեսքով և բովանդակությամբ:

Խաղի նպատակը առաջարկվածին գեղեցիկ ու սահուն հանգեր հորինելն է՝ որքան հնարավոր է արագ ու զավեշտական: «Մի ժամանակ բոլոր ղարաբաղցիները հանգախոսներ էին: Ընդունված կարգով՝ խոսքը հանգավորվում էր տոնական օրերին, հարսանիքների, խնջույքների, առօրյա խոսակցության, անգամ տխրության պահերին: Փաստեր կան, որ հանգախաղերը մտային մարզանքի ժամեր էին նաև դպրոցներում՝ Մեսրոպի ժամանակներից սկսած և դրան ի նպաստ կային ձեռնարկներ, որոնց մեջ ընդգրկված էին խաղերգեր, շուտասելուկներ, հանելուկներ և այլն,»-գրում է Լ. Հարությունյանը: [3, էջ 323] Եթե խաղը կազմակերպվում էր տոնախմբությունների ժամանակ, հանգախաղեր էին տեղի ունենում աղջիկների և տղաների միջև: Խաղերգը հիմնականում մանկանը զվարճացնելու նպատակով էին ստեղծվում: Այս մասին վկայություններ կան մանկական պարբերականներում:

«Նշխարների» 4-րդ գրքի «Խրախճանք և խրախճանականներ» բաժնի ակնարկում Լ. Հարությունյանը փորձում է բացահայտել այս ժանրի էությունը: «Միշտ էլ նորանոր հնարներ էին փնտրվում խրախճանքները միօրինակությունից զերծ պահելու համար: Հետզհետե ավելի հեզաճկուն ու բազմաձև էին դառնում նախկին ծիսական պարերը, մերձենում հայ առօրյային, կատարելագործվում էին երգամատուցման ձևերը, խրախճանքներին ուղեկցող «դրսային» վարժանքներն անգամ՝ ձիախաղը, կռիվը, լարախաղացությունը...անբաժան էին մնում հնարագործություններից, երգից ու տաղասացությունից: Վաղուց սովորություն դարձած խրախճանամիջոցների կողքին ավելանում են նորերը, հանգախաղը, գլուխկոտրուկները, խնդրախաղերը, արագ հաշվումները, ոչ մի սահման չճանաչող զվարճաբանությունները, նմանակումները, հնարամտելը...»: [1, էջ 105]

Լ. Հարությունյանը կարևորում է հանգերն ու շուտասելուկը: Հանրահայտ՝ «դերին ճրին ծորումը դերին ճորուն ճուլը ծուռ» կամ «Մուկունը քցիմ, ծուկունն օտիմ, ծուկունը քցիմ մուկունն օտիմ» շուտասելուկները պահանջվող կարգով արտաբերելիս հիմա էլ իրենց ուրախ դերն էին կատարում՝ ծփանք առաջացնելով ասողների և լսողների մեջ»,- գրում է Լ. Հարությունյանը: [1, էջ 105] Նա գտնում է, որ եթե ի մի գումարվեր աշխարհի ժողովուրդների շուտասելուկային ողջ հարստությունը, ապա նրանում իր դասական հանճարեղ կեցվածքով ուրույն տեղ կունենար «Ակուփ ապեր» շուտասելուկը.

Ակուփ ապեր,
Տու ինձետե
Մին խուփ կապե,
Մին կեփ կապե,
Մին տեփ կապե,
Անումդ տինիմ
Խուփըկապե,
Կփըկապե,
Տփըկապե
Ակուփ ապեր: [1, էջ 105]

Ինչպես տեսնում ենք նշված շուտասելուկը ունի յուրօրինակ ռիթմ ու երաժշտականություն, նաև հուշում է նշանավոր արհեստավորի մասին, որը և երեխայի մեջ սեր ու հարգանք է ներշնչում

աշխատանքի ու մարդու մասին: Նա նաև տեղեկանում է կենցաղային տեփ, կեփ, խոփ գործիքների մասին:

Լ. Հարությունյանը գրի է առել «հայի հինգ մատները» հին զրույցը, որը երեխաներին և՛ մատների անուններն է սովորեցնում, և՛ բարոյական դասեր է տալիս նրան.

**ա.** Ճկույթիկն ասաց.-Եկեք հաց ուտենք:
Մատնեմատն ասաց.- Բա ինչ ուտենք:
Մեծ մատն ասաց.-Աստված կտա՝ կուտենք:
Ցուցամատն ասաց.-Որ չտա՞...
Բութն ասաց.-Կգողանանք՝ կուտենք: [1, էջ 24]

Գողություն բառը լսելուց հետո բոլոր մատները թափվում են բութ մատի վրա, ծեծում, ծեծում, մինչև խեղճը տափականում է:

Բ մասում բութն ասում է, որ եթե աստված չտա, կարարեն՝ ուտեն:

Գ հատվածում մատները կասկածում են, որ աստված իրենց կպահի, բութն ասում է, որ կբռունցքվեն.... Այսպես բութ մատը ինքնագիտակցության եկած հայն է, որ ի վերջո գալիս է բռունցքվելու գաղափարին:

Լ. Հարությունյանն իր հավաքածուներում զետեղել է նաև մանկական երգեր, որոնք և՛ ճանաչողական են, և՛ դաստիարակիչ, երբեմն՝ զավեշտական ու խարազանող.

Այիբ բեն,
Տախտեն դփեմ,
Օխտը հացը
Մեհետ կըխպեմ,
Պենեն ժամեն
Փախճիմ-կորչիմ,
Հացեն ժամեն
Կյամ խլըշիմ: [3, էջ 170]

Նշխարների առաջին գրքում զետեղված են ժողովրդական բառ ու բանով համեմված փոքրիկ երգեր, որոնք և բարեհունչ են, և դյուրընկալ ու հեշտ անգիր արվող.

Այսպես. Ցորեն՝ հաց,
Մաշկաս կաց,
Կորեկ հաց
Փորաս կաց... [3, էջ 170]

Կամ. Թըթրմաղե, թըթրմաղե
Քու մար ասումա ճելլի մաղե: [3, էջ 171]

Յուրահատուկ հնչողություն ունեն բնությանն ու կենդանական աշխարհին նվիրված մանկական երգերը: Լ. Հարությունյանի հավաքած խաղիկներում արցախցու բարոյականությունն է, հյուրասիրությունն ու պատվասիրությունը.

Այ ախպեր
Հայ ախպեր
Տժեր օրեն
Թայ ախպեր: [3, էջ 173]

**Կամ**

Հյավուր ընք,
Սվավուր ընք,
Թվավուր ընք:
Հայ ընք,
Վայ ընք,
Ըստծու թայ ընք: [3, էջ 173]

Այստեղ նաև հայ մարդու ճակատագիրն է:

Հանելուկը դեռևս հեթանոսության շրջանում տարածված էր ժողովրդական լայն զանգվածների մեջ, «մտնում էր ամեն ընտանիք ու հավաք, կատարելագործվում ու զարգանում, դառնում հաճելի մտավոր ժամանց՝ բոլոր խավերի մարդկանց համար: Այն ընկալվում է որպես իմաստաբանություն, որը խորին քննության ու ստեղծագործական պրպտումների արդյունք է և որի շուրջ պետք է լրջորեն

մտորել: Ընդունված էր նաև հանելուկով մրցելու սովորությունը»: Լ. Հարությունյանի վկայությամբ՝ հանելուկների մեծ մասը վերծանելու համար պահանջվում է հոգեղեն – իմացական, լայն առումով՝ բնաճանաչողական և աշխարհաճանաչողական բարձր մակարդակ: Նման կարողունակություն հայ ժողովուրդը ձեռք է բերել հանելուկի և նմանատիպ գլուխկոտրուկների շարունակական մասսայականության և խոր տարածվածության և իր ընդաբույս բնապաշտության և հետաքրքրասիրության շնորհիվ:

Լ. Հարությունյանը պարզաբանում է հանելուկ բառը նշում, որ բարբառում այն ավանդվել է հնելիք տեսքով, «որն իմ համոզմամբ, առավել ստույգ է մատուցում բառի նախնական իմաստը և ձևը՝ հանելիք, որ հեշտությամբ կարելի է փոխարինել մեկնաբանելիք, քննելիք, բացահայտելիք, հայտնաբանելիք և այլ հոմանիշներով: Հանելիք բառը իրեր և երևույթներ քննելու, նրանց գաղտնիքների մեջ խորանալու միտում ունի»: [1, էջ 107]

«Հանելուկի, շուտասելուկի, զվարճախոսության համար Արցախի բարբառը ունի մի ընդհանուր անուն՝ պնգըլ: Այս բառը բարբառում որոշ իմաստով բացասական է (ոչ լուրջ բան): Ուրեմն՝ պնգլաբանել-կնշանակի ոչ լուրջ բան ասել: «Ըստ քրիստոնեական մոտեցման պնգլաբանելը հեթանոսությունից ժառանգած պիղծ սովորություն է»,- գրում է Լ. Հարությունյանը:

Նա «Քաթ, քաթ» բանահյուսական չափածո շարքը պարզում է, որպես հանելուկների շարք, այնինչ բանասերներից ոմանք դա անվանել են հեքիաթների նախաբան: Լ. Հարությունյանը, բանագետի հմտությամբ պարզում է հանելուկի իմաստը, այլաբանական պատկերների միջից վեր է հանում իրերի ու երևույթների ներքին էությունն ու աշխարհիկ բովանդակությունը:

Հետաքրքիր, ճանաչողական հանելուկներ կան 4-րդ գրքում:

Օր.-Ապան եկավ՝ քրտնած տախ,
Շալքը էրկան քթան կախ:
(թեյնիկ)
Ես քինիմ, ինքը մնա:
(հետք)
Էն հինչնա,
Հայերը օտումըն,
Թորքերը խմում:
(երդում)
Պահում-պաշտում՝
Կտրում՝ տեն ածում:
(մազեր) [1, էջ 114-115]

Հանելուկը խոսքի, տրամաբանության զարգացման կարևոր գործոն է: Այն պահանջում է մտային վարժանք, համադրում, առարկաների ծանոթ և անծանոթ հատկանիշների քննում, որի արդյունքում ստացվում է առարկայի ամբողջական պատկերը:

Հանելուկի քողարկված միտքը ստիպում է երեխային ի մի բերել իրեն ծանոթ հատկանիշները, համադրել դրանք: Վերլուծական-համադրական ուսուցողական մեթոդը օգնում է երեխային ստեղծել առարկայի մտովի դիտողական պատկերը, լարել հիշողությունը և մտահանգում կատարել: Երեխան ուրախություն է ապրում, երբ գտնում է ճիշտ պատասխանը: Նա նաև առնչվում է բնության հրաշալիքներին, կենցաղային իրերին ու երևույթներին: Արցախի բանահյուսության այս ժանրը մանկան դաստիարակության կարևոր գործոն է եղել դեռևս շատ հնուց: Ժողովրդին միշտ էլ հետաքրքրել է երեխայի դաստիարակության ու կրթության կարևոր գործոնը:

Արցախյան առածներն ու ասացվածքները միշտ էլ դաստիարակել են երեխային, պատվաստել բարոյական բարձր արժանիքներ: Սրանք մարզում են երեխայի միտքը, ճանաչել տալիս դրականը, անհանդուրժողականություն ցուցաբերել բացասականի հանդեպ:

«Զրույցներ, առակներ, ավանդություններ» բաժնում (1-ին գիրք) զետեղված են նյութեր, որոնց դաստիարակիչ արժեքը անչափ մեծ է), «Մին պիծի հափուռ», «Լուծը», «Վե՞ր Արտավազ», «Մարդին աշկը մինակ վեղը կքուշտըցնե», «Փիսը լավին, լավը՝ փիսին», «Տոնդ քանդվի, պրտքատար», «Քրիստոսը ըստի ասից» և այլն:

Ավանդությամբ մեզ հասած տեղեկությունները ևս ճանաչողական նշանակություն ունեն: «Վեղը շատ չրչարե» զրույցում մարդը գալիս է այն եզրակացության, որ ամենաքաղցրը հողն է, ամեն ինչ հողից է, ամեն ինչ հողով է կենդան: «Վըղեն հիշքան շատ չրչարիս էնքան վեղը քխծրանումա, վեղեն

քաղցրն էլ տամա պրանետ: Մեննդ պահե, քու դուշմանդ քու աշկդա, վեղումդ թմահեն ծառը տնգիսուչ: Չաշմիշ կընիս...հացդ պատան չի կենալ, սորփը մատաղրդ ընթունել չի, կաթնդ կշաղե [3, էջ 67]»... Որոշ երգիծազրույցներ վերաբերում են ուսմանը, դպրոցին, գրաճանաչությանը («Գյուղում չեմ», «Լոխ մինա», «Տանա իվիլ ընիլ չի», «Ռուսերեն խոսելը»):

Մանկապատանեկան շրջանում լայնորեն տարածված ժանրը հեքիաթն է՝ իր 3 տեսակով: Արտացոլելով արցախցու մտածողությունը՝ հեքիաթը հսկայական դեր է կատարել երեխաների դաստիարակության գործում:

Փաստերը վկայում են, որ մինչև մանկական գրականության որպես առարկա ձևավորվելը, ժողովրդական բանահյուսության նյութերը կրթադաստիարակչական դեր են կատարել՝ դառնալով ընթերցանության լավագույն նյութ, զետեղելով ծրագրերում, ընթերցանության նյութերի ցանկում:

Նշանավոր մանկավարժի կարծիքով «Մեկ անգամ սովորեցնելու համար 10 անգամ սովորել է պետք, պահանջելու համար իրավասու պետք է լինել, դաստիարակելու համար պետք է ունենալ ամենահոյակապ մարդկային կերտվածքը»,-գրում է Լ. Հարությունյանը:

Հետաքրքիր է Լ. Հարությունյանի գրառած մանկական բառաշարքը: Այն մեկից մեկուկես տարեկան երեխաների բառապաշարին է վերաբերում: Հետաքրքիր բառապաշարը բացահայտում է երեխաների բնավորությունը: Իսկ թե ինչպես են Արցախում համառոտում անձնանունները, վկայում են Լ. Հարությունյանի «Նշխարների» առաջին հատորի, «Անձնանունների համառոտություններ ու հնչյունադարձումներ» բաժինը:

Դեռևս իր առաջին գրքի առաջաբանում Լ. Հարությունյանը հմուտ մանկավարժի հավատամքով նշում է, որ ղարաբաղյան ամբողջ բանահյուսության միջով անցնում է որդան կարմրի մի երակ, դա հայ ժողովրդի ազատասիրությունն է, իր ազգային իրավունքների, արժանապատվության, ազատ գոյության համար մաքառումը, որը իր գոյավիճակի թելադրանքով ամենուր ընդունել է ազգային կեցվածք ու բնավորություն.

«Մարթ ըշխարքես լուսը տանը պտըրհանավն ա տեսնում»:

«Անհնար է ծուռ արխարհում շիտակ ապրելը: Կարել չըս դուզ քյինիս, վեր հղեն ծռըմռռա»:

Ղարաբաղցին հանգիստ խղճով չի նստել անարդարության հետ դեմդեմի: («հարուր տրեկան էլ ընիմ, ծռռ փադը չալիգ չըմ շինիլ»): Ինչպիսի ծանր պայմաններում էլ լինի արցախցին, թեկուզ 100 տարեկան ծեր, չի հենվի ծուռ գավազանին: [3, էջ 6]

Լ. Հարությունյանի «Նշխարներում» ղարաբաղցին պաշտում է Աստծուն՝ որպես իր երկվորյակի, իր շնորհակցի, միշտ էլ օրինակ ունենալով նրան, նրա մեջ փնտրելով լավին ու կատարյալին: Նա երբեք աստծուն անիրական չի համարել: Աստված էլ տառապանքով է անցնում իր ուղին, ինչպես՝ մարդը: Մի օր մռայլ է, մի օր ուրախ, մի օր ցավի միջից ժպտում է անցավ: Նրա համար էլ երազային է մանկությունը:

«Աստծուն ըսեցին-խե՞ տխուր ըս: Ասից-խխոթունս մեննս ընգավ: «Աստծուն ըսեցին-խե՞ ուրախ ըս: Ասից-խխոթունս մեննս ընգավ»:

Աստված պարզ ու հասարակ է, ինչպես ինքը, նրա հետ կարող է հանաք անել, խաղալ, խրատել, պատժել…«Աստուծ, մեզ լավ պահե, թա կարումչըս, վեր եկ մեր կոշտը, մունք քեզ ճղպորու մաչու նման պահինք»: Նա միշտ մարդկանց կողքին է, առօրյա հոգսերի ընկերը:

Արցախի բանահյուսության բոլոր ժանրերն էլ մանկական գրականության համար արժեքավոր նյութեր են և մտնում են մանկական ընթերցանության շրջանակները:

Չնայած հնում մանկական գրականությունը չի գիտակցվել որպես գեղարվեստական գրականության ինքնուրույն հատված, դա չի խանգարել մեր մանկավարժներին՝ երեխաների ուշադրությունը բևեռել բանահյուսական ստեղծագործությունների վրա: Իսկ Արցախի բանահյուսության բազմաթիվ ժանրեր տեղ են գտել նաև Լ. Հարությունյանի «Նշխարներ…»- ի 5 գրքերում: Բանահյուսական այդ գանձերը անգնահատելի դեր ունեն մեր բանարվեստի պատմության մեջ և արժեքավոր նյութեր են նաև հայ մանկական գրականության համար:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 4,Ստեփ., 2009:
2. Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, գիրք 5, Ստեփ., 2011:
3. Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Եր., 1991:

**РЕЗЮМЕ**
**Фольклор – урок и школа**
**Анаит Атаян**

**Ключевые слова:** детская литература, колыбельная, скороговорка, загадка, считалочка, известный сборщик фольклера, выдающийся педагог.

В данной статье характеризуются колыбельная песня, загадка, игра-стишок, скороговорка, остроумное высказывание, анекдоты фольклорных жанров, целью которых является воспитать ребенка в национальных традициях, помочь ему твердо стоять на родной могущественной земле.

Статьи, очерки заслуженного педагога говорят об учебно-воспитательном значении фольклорных материалов. «Реликвии» Л. Арутюняна в пяти томах – великолепный материал для детской литературы и детского чтения на все времена.

**SUMMARY**
**Folklore – Lesson and School**
**Anahit Atayan**

**Keywords:** literature for children, lullaby, tongue-twister, riddle, counting songs, large folklore collection, outstanding teacher.

This article describes a lullaby song, a riddle, a poem-play, a tongue twister, a witty saying, anecdotes of folklore genres whose goal is to raise a child in national traditions, to help him firmly stand on his powerful motherland.

Articles, sketches of the deserved teacher indicate of the educational significance of folklore materials. "Relics" by L. Harutyunyan in five volumes is a great material for children's literature and children's reading at all times.